

այսինքն Հայաստանում քրիստոնէութիւն տարածուելուց առաջ: Արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ Տաճարը շինուել է այն շրջանում, երբ այստեղ տիրապետող էր յունական գրչութիւնը:

Շինութիւնը կառուցուած է մետաղէ շաղկապի և կապարի զանգուածի օգնութեամբ: Հռովմէական ոճի ապացոյցներն են շինութեան ճակատակողմի քանդակները, որ մեզ յայտնի են բացառապէս հռովմէական ժամանակներից:

Բ. դարում հեթանոսական տաճարը քրիստոնէականի է փոխուել: Թ. դարում այդ տաճարի մօտ թաղուել է Հայոց շտոյ կաթողիկոսը և Գառնին երկար ժամանակ դարձել է ուխտատեղի: ԺԳ. դարում հին տաճարի տեղը կառուցուել է նոր տաճար: ԺԵ. դարում, Թեմուրի ապստակութեան ժամանակ շինութիւնները կործանուել են: ԺԶ. դարում, եւրոպական ազդեցութեան շրջանում՝ Հայաստանում աւերմունքը կատարեալ է եղել: Զեկուցման ժամանակ ցոյց էին տրուում բազմաթիւ լուսանկարներ:

Ա. Յ. Ե.

Ե Ր Բ Է Ք Չ Ե Մ Ս Պ Ա Ս Ի.

(Ռ Ո Ւ Ս Ե Ի Կ Ե Ի Գ)

Երբէք չեմ սպասի՝

Որ ձմռան ցրտին ձիւնապատ դաշտում

Հոտաւէտ, կարմրերանգ վառ վարդեր բացուեն.

Որ ապառաժուտ ժայռերն զգածուեն

Եւ կարեկցութեան արտասուք թափեն.

Որ ինձ մօտենան ծովերն հեռաւոր՝

Առաջ մղելով փրփրայոյզ ալիք,

Պաղաղ, հանդարտիկ, ոտներիս մօտին՝

Ծփուն կոհակներով հոգիս գրաւեն.

Որ երկինքը ներքեւ, ինձ մօտ, ցած իջնի,

Եւ երկնակամարն ինձ իւր մէջ առնի,

Որ կարմիր արեւն ջերմ ճառագայթով

Իւր ճաճանչները դէպ ինձ դարձնի.

Որ իմ սրտազին, համարձակ ու ջերմ

Բաղդի տենչանքով համակուած կոչին՝

Մարդկանցից գոնէ մի բառ պատասխան

Կամ կարեկցութեան մի քաղցր խօսք լսեմ:

Հասո.